ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 657-Ա « 09 » փետրվարի 2026թ.

ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից և ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով.

1. Հաստատել, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների անձնական օգտագործման ավտոմեքենաները ծառայողական նպատակով օգտագործելու դիմաց Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի N8 հավելվածի աղյուսակ 1-ի «Տրանսպորտային նյութեր» հոդվածին համապատասխան ձեռքբերվող և որպես օգնություն (անհատույց) հատկացվող հեղուկ վառելանյութի (բենզին) բաշխումը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել.

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված հեղուկ վառելանյութը (բենզին) ամսական քանակներին համապատասխան հատկացնել սույն որոշման հավելվածում նշված ստորաբաժանումների պետերին.

2)սույն որոշման հավելվածում նշված Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների պետերին՝ սույն որոշման 1-ին կետում նախատեսված հեղուկ վառելանյութի (բենզին) բաշխման վերաբերյալ ամսական հաշվետվություն ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչություն, իսկ հիշյալ վարչության կողմից ամսական ամփոփ հաշվետվությունը՝ աշխատակազմի ֆինանսական վարչություն:

3. Սահմանել, որ.

1) սույն որոշման 1-ին կետում նախատեսված հեղուկ վառելանյութի (բենզին) ստացման, բաշխման և հաշվառման համար պատասխանատու են սույն որոշման հավելվածում նշված ստորաբաժանումների պետերը.

2) ստորաբաժանումների հաշվետու ամսվա հաշվետվություններով չբաշխված հեղուկ վառելանյութի (բենզին) մնացորդը ներառվում է հաշվետու ամսվան հաջորդող ամսվա հասանելիք քանակի մեջ:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել սույն որոշման հավելվածում նշված ստորաբաժանումների պետերի վրա:

5. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

6. Սույն որոշման գործողությունները տարածվում են 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
«09» 02. 2026թ.
N 657 - Ա որոշման

ԲԱՇԽՈՒՄ

Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների անձնական օգտագործման ավտոմեքենաները ծառայողական նպատակով օգտագործելու դիմաց, որպես օգնություն (անհատույց) հատկացվող հեղուկ վառելանյութի (բենզին)

h/h	Ստորաբաժանման անվանումը	Ամսական հատկացվող վառելիքի (բենզին) քանակը /լիտր/
1	2	3
1	Հասարակական կարգի պահպանության ծառայություն	4700
2	Կոմունալ տնտեսության վարչություն	1430
3	Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն	1250
4	Վերահսկողության վարչություն	950
5	Առևտրի, ծառայությունների և գովազդի վարչություն	600
6	Շինարարության և բարեկարգման վարչություն	1200
7	Ներքին աուդիտի բաժին	400
8	Ֆինանսական վարչություն	380
9	Իրավաբանական վարչություն	1000
10	Մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչություն	600
11	Արտաքին կապերի վարչություն	90
12	Զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն	400
13	Սպորտի և երիտասարդության հարցերի վարչություն	200
14	Քարտուղարություն	200
15	Տրանսպորտի վարչություն	525
16	Երևանի քաղաքապետի օգնական	400
	ԸՆԴԱՄԵՆԸ	**14325**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**